ԳՅՈՒՄՐՈՒ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ГЮМРИЙСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ ПЕДАГОГИЧЕСКИЙ ИНСТИТУТ ИМ. М. НАЛБАНДЯНА
GYUMRI STATE PEDAGOGICAL INSTITUTE AFTER M. NALBANDYAN
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ SCIENTIFIC PROCEEDINGS

Պրակ Բ
Выпуск Б
Issue B

2014 № 1

ԼԵԶՎԱԲԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՏԴ 81. 4

Հ.Հ. Մատիկյան

ԳԵՐԲՆԱԿԱՆ ԿԵՐՊԱՐՆԵՐԸ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՕՐՈՐՈՑԱՅԻՆ ՏԵՔՍՏԵՐՈՒՄ

Բանալի բառեր՝ գերբնական, կերպար, օրորոցային երգ, բանահյուսություն, տեքստ, անանունություն:

Ключевые слова: сверхъестественный, персонаж, колыбельная песня, фольклор, текст, анонимный.

Keywords: supernatural, personage, lullaby, folklore, text, anonymous.

Ներկա ուսումնասիրությունը անդրադարձ է գերբնական կերպարներին անգլալեզու և հայ օրորոցային տեքստերում: Բանահյուսական տեքստի նկատմամբ գիտական հետաքրքրությունը պայմանավորված է նոր գիտակարգի՝ լեզվաբանագիտության (լինգվոֆոլկլորիստիկա) ձևավորմամբ: Բանահյուսական օրորոցայինը՝ իբրև տեքստի առանձին տեսակ, բնութագրվում է լեզվառճական ուրույն հատկանիշներով:

Անգլիական և հայկական օրորոցայինների՝ որպես բանարվեստի ինքնատիպ տեքստերի յուրահատկությունը թելադրվում է նրանով, որ հասցեատերը երեխան է և նրա աշխարհը, իսկ հեղինակը՝ ժողովուրդ-ծնողը, առավելապես երեխային խնամող կանայք: Օրորի տեքստի լեզուն աչքի է ընկնում հուզականությամբ, արտահայտչական ներկապնակի բազմազանությամբ: Մայր (օրորասաց) և երեխա, երեխա և սեր, գովեստ ու խրատ, կարոտ ու հորդոր, օրհնանք ու մաղթանք ներառող տեքստեր. սրանք են բովանդակային այն հիմնաշերտերը, որոնցում դրսևորվում են օրորների խոսքարվեստի մասնահատկությունները: Օրորների տեքստերում ձևավորվում է գերբնական այն միջավայրը, որի կերպարները մոգական են, գերիրական: Ասելիքի մեջ մայրն անկեղծ է, չի թաքցնում զգացմունքները, հիացմունքն ու հիասթափությունը առօրյա կյանքից:

Պատմամշակութային տարբեր համատեքստերում օրորոցայինի հիմնական գործառույթը մանկան քնի ապահովումն է, որն իրականացնում են գերբնական, նվիրատու կամ քնաբեր կերպարները: Ինչպես արդեն նշել ենք, հիմնականում երեխայի և մոր կապն է արտահայտված օրորներում, բնականաբար գերակա է դառնում իգական սեռի դերակատարումը: Ասացողի գործոնը կարևորվում է տեքստում, քանի որ նա ի զորու է ազդելու լսողի վրա (օրորոցայինների պարագայում՝ երեխայի): Ե՛վ երեխան, և՛ օրորասացը դիտարկվում են որպես օրորի տեքստի ակտիվ մասնակիցներ: Երեխայի քունն ապահովող երգերում ավելի շատ են ընդգծվում մայր-երեխա (mother-child) անմիջական շփումն ու փոխհարաբերությունը: Ամեն մարդու կյանքում մայրերը առաջին հեքիաթասացներն են, երբեմն նաև հեքիաթարարները: Հեքիաթի մեջ երեխան ավելի քան ապահով է, քանի որ նա մեծ մասամբ աճում ու մեծանում է գերբնական ու նվիրատու ոգիների բարեբեր ու հովանավոր մթնոլորտում: Երբեմն այս ոգիները կարող են ստանալ այլ անվանումներ՝ պահապան ոգի, մանկապահպան ոգի, խնամարկու ոգի:

Հաճախ ավանդական օրորների հենքով մայրն ստեղծում է իր տվյալ պահին, տվյալ վիճակին համարժեք ինքնաբուխ, հանպատրաստից տեքստեր, հատկապես այն ժամանակ, երբ ունենում է գերխիտ ապրումներ: Զավակը կարծես դառնում է այն նվիրական անձը, որին մայրը հաղորդակից է դարձնում իրեն հուզող խնդրի մասին, մինչև իսկ պատմում իր կյանքի տեքստը: Բարուրին իր ճակատագրի մասին պատմելը անսովոր, արտակարգ հաղորդակցման միջոց է, որը դառնում է նաև յուրօրինակ հոգեդարման մոր համար:

Շատ օրորներում հստակ նկատելի է, որ մայրը դիմում է մանկապահպան հովանավոր կերպարներին (Սուրբ Աստվածամայր, Աստված, սրբեր, հրեշտակներ)՝ որպես գերբնական ուժերի: Վկայաբերենք վերոնշյալը հաստատող բանահյուսական նմուշներ:

And *Holy Mary* pitying us
To Heaven for grace doth sue
Take time to thrive, my ray of hope,
In the garden of Dromore
Sing hushabye loo, low loo, low lan
Hushabye loo, low, loo.[10].

Մայրը օրորների տեքստերում երբեմն արտահայտում է իր հնարավորությունների սահմանափակ լինելը, հետևաբար վերերկրային, գերբնական ուժե-

րին նա խնդրում է իր զավակի համար ապահովել բարօրություն, ծաղկում, հետագա քայլերի զորացում: Նա օրորի բովանդակային պլանում հույզերի ու ապրումների ենթահողումներով ստեղծում է իրականությունից դուրս մի իրականություն՝ օգտագործելով *դրախտ*(Heaven), *պարտեզ*(garden) բառային միավորները: Ըստ էության գերբնական կերպարները հանդես են գալիս գերբնական միջավայրում, և հերոսները ներդաշնակ են այդ միջավայրին, նրանց գործողություններն էլ թելադրվում են հենց այդ միջավայրով: Հայերեն օրորների տեքստը հնչում է իբրև պահպանիչ մանկան համար. այն չարխափան է, ունի չար աչքից ու չար մտքից երեխային զերծ պահելու հմայական զորություն:

Օրոր, օրոր օրերուդ
Թևս դեմ բերեմ չարերուդ,
Չարխափան չարերդ խափանի,
Աստվածամայրն արևդ պահի [6, էջ 55]:

Տեքստն արտահայտում է չարի դեմ արգելքի գաղափար (*Չարխափան չարերդ խափանի*), միաժամանակ օրհնանքի *(Աստվածամայրն արևդ պահի)* բանաձև է և աչքի է ընկնում ժողովրդական լեզվամտածողության տարերքի անզուգական դրսևորմամբ*(Թևս դեմ բերեմ չարերուդ):*

Այսպիսով՝ օրորների տեքստի լեզուն արտահայտում է բանաձևեր (մաղթանք, օրհնանք, չար ուժերի դեմ խոսքի հմայական զորությամբ հանդես գալու միտում), որոնք օժտված են ցանկության իրագործման գերբնական հնարավորություններով: Մանկանը քնեցնող մայրն իր ամենանվիրական զգացմունքները, սրբազան դողն ու երեխայի ապագայի վառ երազանքներն է արտահայտում մի շարք օրորներում՝ ստեղծելով երևակայական, հեքիաթային աշխարհ իր և երեխայի համար: Օրորոցայինի տեքստը ներկայացնում է մի ուրույն աշխարհ: Սովորաբար մայրը դիմում է հեքիաթային ժամանակին՝ փորձելով կտրվել իրական աշխարհից ու ժամանակից: Ավելին, պատկերվող աշխարհը թեև իրականին մոտ է, բայց նաև մտացածին է ու անիրական: Իհարկե, այդ աշխարհը խիստ պայմանական է. գոյություն ունի և՛ ժամանակի մեջ, և՛ ժամանակից դուրս: Հեքիաթային ժամանակի մեջ չկա գոյի սահմանափակում և առարկայացում, որովհետև ժամանակն ընկալվում է որպես անվերջ հասկացություն: Հիշյալ համատեքստում երեխան դիտվում է անվերջության, անեզրության, անհունության լուսապսակով:

Մոր ստեղծած երևակայական աշխարհում թափանցում են խորհրդանշական կերպարներ՝ իրենց գերբնական զորությամբ: Խորհրդապաշտական պատկերները օգնում են ստեղծելու այնպիսի աշխարհ, որտեղ ամեն ինչ բարի է, լավատեսությամբ լի, լույսով պարուրված: Մի շարք օրորներում ակնհայտորեն

պատկերված են հեքիաթային գործող անձինք կենդանական և բուսական աշխարհից: Յուրահատուկ դերակատարում ունեն կենդանիները, որոնք կարծես կենդանակերպ քնաբեր ոգիներ են և ուղեկցում են երեխային դեպի բարին նրա կյանքի անցումային փուլերում: Այսպես՝

Օրոր, օրոր, եղներն ին եկեր,
Եղներն ին եկեր, լեռներն ին իջեր:
Քեզ ալ անուշ քնիկ ին բերեր.
Բերեր քու ծով-ծով աչերդ ին լցեր,
Անուշ քնովդ ին քնացուցեր,
Քաղցրը կաթնովն ին կշտացուցեր[6, էջ 56]:

Տեքստը ինքնին մեղեդային է, յուրօրինակ մեղմասություն, *անուշ քնիկ, ծով-ծով աչեր, քաղցր կաթնով* արտահայտություններում ընդգծված մակդիրներով ստեղծվում է այն մեղմ ու անդորրաբեր մթնոլորտը, որն այնքան անհրաժեշտ է երեխայի հանգիստ քնի համար: Բանահյուսական այլ ժանրերում ևս եղներ-եղնիկին կամ պախրային է հաճախ վերագրվում մոր գործառույթը: Այս մտքի տիպական դրսևորմանն ենք հանդիպում նաև Ղ.Աղայանի «Անտառի մանուկը» հեքիաթում.

Միրո՛ւն երեխա, որբ ես մնացել,
Քո անբախտ մորը գերի են տարել.
Նա գնա՜ց, կորա՜վ, էլ ետ չի գալու,
Էլ ոչ մի անգամ քեզ ծիծ չի տալու:
Նա քեզ փաթաթեց լայն տերևներով.
Ճոճի մեջ կապեց՝ «նանիկ» ասելով.
Նա լաց էր լինում աղի արցունքով,
Իր վերջին «նանիկն» ասում էր լալով.

Նանա, բալիկս, նանա՜,
Մեծատերն թաթաշոր,
Մանրատերն ոտաշոր,
Քամին կանի՝ ժաժ կըտա,
Պախրեն կըգա՝ ծիծ կըտա,
Նանա , գառնուկս, նանա…
Ահա եկել եմ, որ քեզ ծիծ տամ ես,
Պահեմ, պահպանեմ իմ հորթուկիս պես,
Պախրան ծիծ տվավ երեխին, երեխան կշտացավ ու քնեց [5, էջ 383-384] …

Ինչպես տեսնում ենք, ժանրային ներթափանցումը (օրորը հեքիաթում) ավելի է հարստացրել օրորի բովանդակությունը:

Մեզ հուզող խնդրի տեսանկյունից ուշագրավ է անգլիական բանահյուսության մեջ փերիների (fairy) վտանգից պաշտպանվելու գաղափարը:

Փերիները՝ որպես գերբնական կերպարներ կամ ոգիներ, հանդես են եկել երեխաներին գողացող թևավոր էակներ: Այն միտքը, թե Շոտլանդիայում (և ոչ միայն) փերիները օրորոցից գողացել են երեխային և նրա փոխարեն (fairy changeling) այլ երեխա են դրել, մեր ժամանակներում արդեն անհավանական է թվում: Այս նույն միտքը հաստատվում է հետևյալ օրինակով. Fairy steals child from cradle and leaves fairy substitute[8, p. 45]: Չնայած այս ամենին՝ այլ աղբյուրներ հաստատում են այդ իրողությունը: Ջ. Մ. Բարրին տալիս է փերիների ծագման իր տարբերակը. «Երբ առաջին անգամ երեխան ծիծաղում է, նրա ծիծաղը բաժանվում է միլիոնավոր կտորների, և դրանք տարածվում են աշխարհով մեկ, այսպես էլ առաջանում են փերիները»[1, էջ 39]:

Բացի գերբնական կերպարներից ու գերբնական միջավայրից, հայտնի են նաև գերբնական առարկաներ: Այսպես՝ չար աչքից և փերիների վտանգից ազատվելու համար անգլիական իրականությունում երեխայի հագուստին ամրացրել են կրծքազարդ և պահպանիչ բնույթ ունեցող այլ պարագաներ, հայկականում՝ *աչքի ուլունք*:

Քնաբեր գերբնական միջոց է համարվել *քնի ուլունքի* կիրառումը, որն առավել հաճախ հանդիպում ենք հայկական ժողովրդական հեքիաթներում.

Կնիկ դրեց զչոք, մարդ դրեց զգլուխ ու քնավ: Օր քնավ, կնիկ բերեց հանեց ճեպեն *զքնու ի լուն,* թալեց իրկա անկաճ, գլորեց քարըմ բերավ իրկա խեչ, վերուց ուր չոքի վրայեն զիրկա գլուխ, դրեց վըր քարին [4, էջ 349]: Կամ Կյուլ, Բլբուլ *զքնու հըլուն* կթալեն սեյիսի անկաճ, գինան ես իմ, կէլնին զուրանց շորոր կհագնեն, կապեն, զուրանկ կէնին չորպայե նախոշան[4, էջ 54]:

Հայկական սովորութամշակութային կենցաղում մայրը երբեմն չքնող երեխային սաստելու և լռեցնելու համար դիմում է հնարների. «Քնի, թե չէ Մեշոկ պապին կամ բոբոն (երևակայական հրեշի անուն, որով վախեցնում են երեխաներին) կգա ու կտանի»[3, էջ 381]: Այլալեզու մշակույթներում չքնող երեխային սպառնացել են բուի չարագուշակ կերպարով.

Owls, owls, big owls and little,
Staring, glaring, eyeing each other;
Children from your cradle-boards, oh see!
Now the owls are looking at you;

Saying, “Any crying child, Yellow-Eyes will eat him up”,

Saying, “ Any naughty child, Yellow-Eyes will eat him up” .

Անգլիական կենցաղում հիշատակվում է Willie Winkie-ի՝ որպես քնաբեր ոգու մասին:

Wee Willie Winkie
Runs through the town,
Up stairs and down stairs
In his night-gown.,
Tapping at the window,
Crying at the lock,
“Are the weans in their bed,
For it’s now ten o’clock?”

Ի դեպ, կան խորհրդանշական պատկերներ, որոնք ի հայտ են գալիս թե՛ անգլալեզու, թե՛ հայ օրորներում (և ոչ միայն): Կարծում ենք՝ վերջինս պայմանավորված է համամարդկային հոգեբանական օրինաչափություններով, կնոջ մտածողության և հուզաշխարհի ընդհանրություններով՝ անկախ էթնիկական պատկանելությունից: Երեխայի հանդեպ մայրական գորովի յուրօրինակ դրսևորում է, որ օրորին խառնվում է քամու դերակատարումը: Քամին օգնում է, որ օրոցքը տարուբերվի, և քունը ավելի շուտ մոտենա մանկան աչքերին.

Rock-a-bye baby on the tree top,
When the *wind* blows the cradle will rock;
When the bough breaks the cradle will fall,
Down will come cradle and baby and all.

Հայկական օրորոցայիններից մեկում հարավային տաք քամին է օրորում երեխային և ապահովում նրա քնի հոգեզմայլ վիճակը: Քամին՝ իբրև բնության տարերք ու նախասկզբնական տարր(օդ), դարձյալ մարմնավորում է գերիբրական կերպար.

Դու պըզտիկ ես, բարով ջոջնաս,
Հարավ *քամին* քե օրորե,
Ռուրի՛- րուրի՛, րուրի՛, րուրի՛,
Իմալ էնեմ, գառնո՛ւկ տըղաս:
Վերու ոչխար քեզի ծիծ տա [6, էջ 95]:

Բոլոր դեպքերում լեզվական մակարդակում («հարավ քամի») բառակապակցությունը մի դեպքում, մյուս դեպքում «ոսկի քուն» (golden slumbers) բնորոշումները դառնում են մոր հուզական վիճակի ու զավակի համար նվիրական ցանկության բացահայտում:

Golden *slumbers* kiss your eyes,
Smiles await you when you rise:
Sleep pretty wantons, do not cry,
And I will sing a lullaby .
Այսպես՝
Hush, little baby
Hush, little baby, do not say aword,
Papa's gonna buy a *mockingbird.*
To sing it for you.
Պլպուլ ձան արեր ձագերուն,
Քուն է բերեր *շահեն* աչերուն.
Քուն է բերեր աչերն լցեր,
Անուշ քնով քնացուցեր[6,էջ 56]:

Վկայաբերված օրորներում ակնհայտ է բնության պատկերների խորհրդանշանային լինելը: Անգլիական տեքստում *ծաղրասարյակը* (mockingbird), հայկականում պլպուլը ձեռք են բերել գործառութային այլ բովանդակություն, այն է՝ քնաբեր հատկություն: Կարող ենք ասել, որ օրորոցային բնագրերում «բնության բնակիչները» հանդես են գալիս գերբնական տիրույթում: Ինչ խոսք, *գերբնական* բառն ունի նաև *անտվոր, արտակարգ, բնականից վեր* իմաստները[7, էջ 429]:

Այս ամենով հանդերձ կարելի է ասել, որ իր իսկ ստեղծած մտացածին աշխարհում մայրն ինքն է բնությունից կերպար վերցնում և օժտում գերբնական՝ անսովոր, արտակարգ հատկություններով(վերոհիշյալ օրորոցայիններում *եղնիկի, պլպուլի, սարյակի, քամու* հիշատակումը):

Օրորոցայինի իմաստն ու նշանակությունը նաև այն է, որ երեխային ի սկզբանե տալիս ենք այն ըմբռնումը, որ ինքը և բնությունը նույնացած են, այսինքն՝ երեխան բնության մի մասնիկն է: Մայրը երգում է այս օրորոցայինները, որոնցով կարծես իր զավակին հանձնում է մայր բնության խնամքին՝ փորձելով ապահովել նրա և բնության կապը, այսինքն՝ պատկերավոր արտահայտություններով զավակին պարուրում է բնության հանդեպ որդիական սիրով: Վերոնշյալ օրորների նպատակն է ցույց տալ երեխայի և բնության (child-nature), երեխայի և տիեզերքի (child-earth) միասնությունը: Օրորներում առաջադրվում են նաև

գեղեցիկի ընկալում ու զգացողություն՝ ամբողջի ներդաշնակ տիրույթում, և երեխայի՝ բնությանը նմանվելու գեղագիտական գործառույթ: Բնության տարրերի ու երևույթների ներհյուսումը, զուգորդումն ու ներդաշնակումն են ընդգծում և՛ անգլիական և՛ հայերեն օրորոցային տեքստերը:

Օրորասացի ստեղծած այլաշխարհի նկարագրությունը բնութագրվում է նրա լեզվական արտահայտչամիջոցների նրբընտիր կիրառմամբ: Մայրը հոգու նրբացման անսահման ճանապարհ է անցնում՝ ընտրելով իր հոգեվիճակին հարիր լեզվական այս կամ այն միավորը, պատկերավորման միջոցը:

Առհասարակ օրորներում իրականի ու անիրականի սահմանագիծը ջնջվում է, միմյանց ներհյուսումը այնքան ինքնաբուխ է, այնքան անմիջական, որ դժվար է տարորոշել՝ որտեղ է ավարտվում իրականը, և որտեղից է սկսվում անիրականը:

Լեզվական իրականությունը (օրորոցայինի տեքստ) համապատասխանաբար արտահայտում է այն գերբնականը, երևակայականը, մտացածինը, որոնք միշտ արտաքո կարգի են, առօրեական չափումներից դուրս և մոտենում են մոր՝ զավակի հանդեպ ունեցած զգացողության բացառիկ դրսևորմանը, որին մասնակից են թե՛ երկրային և թե՛ երկնային ուժերը:

Անգլալեզու և հայ օրորոցայիններում սակավ են այն նմուշները, երբ օրոր երգողը հիշատակում է հասցեատիրոջ անունը, քանի որ երեխայի անունը տալը գաղտնագիր է եղել: Վաղ պատմական համատեքստում մարդու անունը չէին տալիս և դրա փոխարեն օգտագործում էին փաղաքշական արտահայ-տություններ: Ահավասիկ հայ իրականության մեջ մարդիկ երեխայի անվան փոխարեն ասում էին *սիրունս, բալես* կամ տալիս էին երկնային լուսատուների անուններ՝ *արևս, լուսինս, աստղս, իմ փայլուն աստղս*, երբեմն էլ կենդանիների անուններ՝ *փիսո ջան, փիսիկ ջան, շունիկ ջան*: Ըստ ամենայնի, այս երևույթը ևս կարելի է բացատրել գերբնական առնչություններով և աղերսներով:

Մեր ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ օրորոցայինների տեքստերում առավելապես գործածվում են պատկերավորման այնպիսի միջոցներ, որոնք ըստ էության դառնում են խոսքի ոճական բանադարձման հնարներ: Բոլոր դեպքերում գերբնականին առնչությունն ստեղծվում է բառերի մոգականությամբ, բառի սովորական իմաստից այն կողմ անցնելու և անսովորին հասնելու միտումով:

Lavender’s blue,
Lavender’s green,
You shall be Queen,

Մեկ այլ խոսուն օրինակ է.

Sleep like a lady(or gentleman)
You shall have milk
When the cows come home
Father is the butcher
Mother cooks the meat
Johnnie rocks the cradle
While baby goes to sleep[9, p. 56].

Լեզվառճական մակարդակում Sleep like a lady(or gentleman) համեմատությունը՝ որպես պատկերավորման-արտահայտչական միջոց, ինչ-որ չափով առնչվում է չափազանցություն բանադարձումին: Վերջինս մոր կողմից զավակին տրվող գերագույն գնահատականն է: Հայկական օրորներում ևս օրորասացը գովեստի խոսքեր է ասում իր երեխային, որը նույնպես գերբնական միջավայր է ստեղծում, քանի որ օրորոցում «քնած երեխան չի կարող թագավոր լինել».

Նանա, *իմ թագավոր ջան*,
Ոսկե քանքուլավոր ջան,
Նանա, նանդ քեզ մատաղ,
Նանա հերդ քեզ հոտաղ[2, էջ 56]:

Մեր ընկալմամբ, օրորոցային տեքստերի կրկնվող միավորները (նույնասկիզբ, նույնավերջ), ինչպես նաև օրորոցի պարբերաբար տարուբերումը ի վերջո ծառայում են երեխայի քունը ապահովելու գործընթացին՝ ստեղծելով գերբնական միջավայրի պատրանք: Խոսքի և գործողության համաշեշտությունը ավելի է արագացնում օրորասացի նպատակի իրականացումը:

А. Г. Матикян
Сверхъестественные персонажи в англоязычных и армянских колыбельных текстах

Статья посвящена изучению сверхъестественных персонажей в английских и армянских колыбельных текстах. Сверхъестественные существа имеют разные названия: защитные духи и др. Лингво-стилистический анализ текстов имеет большое значение, это также помогает нам понять роль сверхъестественных существ в колыбельных песнях.

H. H. Matikyan

Supernatural personages in English and Armenian lullaby texts

The article is devoted to the study of supernatural personages in English and Armenian lullaby texts. Supernatural beings have different names: protective soul, devoted soul, etc. The linguo-stylistic analysis of texts is of great value, it also helps us to understand the role of supernatural beings in case of cradle songs.

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. Գիտաժողովի ծրագիր և թեզիսներ, Գերբնականի խորհուրդը հեքիաթում, Հովի. Թումանյանի թանգարան, Երևան, 2014, 55 էջ:
2. Լալայան Ե., Երկեր հինգ հատորով, հատոր 3, «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2004, 278 էջ :
3. Աղայան Է. Արդի հայերենի բացատրական բառարան: «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1976, 1642 էջ:
4. Հայ ժողովրդական հեքիաթներ, Խմբ.՝ Գևորգյան Ս. Ա., հ. XIII, ՀՍՍՀ ԳԱ Հնագիտ. և ազգագր. ինստիտուտ, Եր., 1985, 436 էջ:
5. Աղայան Ղ., Երկեր, «Սովետական գրող» հրատարակչություն, Եր., 1979, 654 էջ:
6. Գրիգորյան Ռ., Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր, Հայկական ՍՍՀ գիտությունների Ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1970, 467 էջ:
7. Մալխասեանց Ս., Հայկական ՍՍՌ պետական հրատարակչութիւն, հատոր 1, Երևան, 1944, 2409 էջ:
8. Garry Jane and El-Shamy H., Archetypes and motifs in Folklore and Literature, Editor, Printed in the USA, 2005, 386 page.
9. Jacqueline S., A Dictionary of English Folklore, Oxford University Press, Cornwall 2000, 411 page.
10. http://www.contemplator.com/ireland/dromore.html

Տեղեկություններ հեղինակի մասին

Մատիկյան Հասմիկ Համլետի *- ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի կրտսեր գիտաշխատող, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղի դասախոս, Անգլերեն լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ, E-mail: hasvrej@mail.ru*

Տրվել է խմբագրություն 10. 09. 2014